

րի այբբենարաններում, բառային ֆոնդում, քերականության և հնչյունաբանության մեջ: Տվյալ լեզուներն ուսումնասիրողի համար հողվածն հնարավորություն է ընձեռում համառոտ պատկերացում կազմելու երկու լեզուների ընդհանուր յուրահատկությունների մասին:

ОСНОВНЫЕ РАЗЛИЧИЯ МЕЖДУ АНГЛИЙСКИМ И ФРАНЦУЗСКИМИ ЯЗЫКАМИ

Л. Г. Торчян

В данной статье представлены основные различия между английским и французским языками, а также некоторые общности, которые отражаются в алфавитах, в лексическом фонде, в грамматике и фонетике. Для тех, кто изучает эти языки, данная статья предоставляет возможность сформировать краткое представление об общих особенностях этих двух языков.

ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՆԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՏԱՐԻԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ս. Կ. ՍԻՄՈՆՅԱՆ

*ԳԴՀ մագիստրատուրայի անգլերեն լեզու և գրականության բաժնի
2-րդ կուրսի ուսանողուհի*

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր մտածողությունը, արժեքային համակարգը, մշակույթն ու սովորույթները, որոնք և կազմում են այդ ժողովրդի ինքնությունը: Միջմշակութային շփումը ևս մեծ դեր ունի ժողովրդի կյանքում: Այլ ժողովուրդների մշակույթներին ծանոթանալու տարբեր ձևեր կան, որոնցից մեկն էլ թարգմանությունն է: Թարգմանությունը պետք է միաժամանակ և՛ հայելու պես արտացոլի այն ժողովրդի մշակույթը, ում պատկանում է բնագիրը, և՛ պետք է համապատասխանի թարգմանված լեզվի լեզվակիրների մտածողությանն ու հայացքներին:

Սույն հողվածը վերաբերվում է Գրիմ եղբայրների «Յենգելն ու Գրետելը» և «Գորտը» հեքիաթների¹ ու դրանց հայերեն (Յ. Թումանյան), ռուսերեն (Պ. Պոլևոյ), անգլերեն (Ս. Յունթ) թարգմանությունների համեմատությանը: Մենք փորձել ենք ի հայտ բերել մասնավորապես այն տարրերը, որոնք թարգմանությունը դարձնում են տվյալ ժողովրդին հասկանալի և հոգեհարազատ:

Չարկ է նշել հեքիաթների ձևակառուցվածքային առանձնահատկությունները, որոնք հիմք են հանդիսանում հեքիաթներում լեզվամշակութային բաղադրիչների վերհանման համար:

Աշխարհի բոլոր օրինակելի ստեղծագործություններն ունեն ձևակառուցային կողմ, որն ընդհանուր է նրանց համար: Սա տեքստի ձևային կառուցումն է, որը

¹ Թումանյանի պատկերացմամբ՝ հեքիաթը մի «հարուստ ու շքեղ աշխարհ է» և «նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ծգտում»:

ներառում է սկիզբ, ծավալում, զարգացում, գագաթ, լուծում և ավարտ: «Հենգելն ու Գրետելը» հեքիաթում սկիզբը փայտահատի և նրա ընտանիքի, ինչպես նաև վրա հասած քաղցի նկարագրությունն է: Ծավալումը սկսվում է փայտահատի և նրա կնոջ խոսակցությամբ և ավարտվում այն ժամանակ, երբ ծնողները երեխաներին երկրորդ անգամ անտառ են տանում: Ջարգացումն ընդգրկում է երեխաների՝ անտառում անցկացրած ծանր պահերի պատկերումը և սպիտակ թռչունի հետ հանդիպումը: Բախումը տեղի է ունենում, երբ երեխաները հանդիպում են կախարդին, և վերջինս Հենգելին փակում է վանդակում: Հեքիաթն իր գագաթին է հասնում, երբ կախարդը որոշում է եփել Հենգելին: Գրետելի հնարամտության շնորհիվ կախարդից ազատվելը հեքիաթի լուծումն է: Երեխաների տունդարձը հեքիաթի ավարտն է:

Գրիմն եղբայրների «Գորտը» հեքիաթի սկիզբը կազմում է թագավորի և նրա աղջիկների նկարագրությունը, ինչպես նաև այն, թե ինչպես է աղջիկը գնում ջրհորի մոտ ու խաղում իր ոսկե գնդակով: Ծավալման փուլում նկարագրվում է, թե ինչպես է արքայադուստրը գնդակը գցում ջրհորը, և գորտը այն հանում է ջրից:

Ջարգացման փուլում գորտը գալիս է պալատ և պահանջում, որ աղջիկը կատարի իր խոստումը: Բախումը տեղի է ունենում թագավորի և աղջկա միջև, երբ հայրը ստիպում է նրան կատարել գորտի կամքը: Գագաթը աղջկա՝ գորտը պատին խփելու նկարագրությունն է: Գորտի՝ արքայազնի վերածվելը լուծման փուլն է: Հեքիաթն ավարտվում է Երկաթե Օհանի հայտնվելով, և նրա սրտի երկաթե կապանքները կտրվելու նկարագրությամբ:

Ցանկացած տեքստ ներառում է զանազան բառային կրկնություններ², որոնք երբեք պատահական չեն լինում, այլ ունենում են որոշակի նշանակություն: Կրկնությունների միջոցով տեքստին տրվում են իմաստային երանգներ:

Հեքիաթում առկա են բազմաթիվ կրկնություններ, որոնց մի մասը չափազանցություն է արտահայտում: Հաշվի առնելով տվյալ ժողովրդի ազգային լեզվի յուրահատկությունն ու ընկալման խնդիրները՝ այդ չափազանցությունները երբեմն տարբեր կերպ են արտահայտված: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Der Brunnen war tief, so tief, daß man keinen Grund sah.

Վերևից մտիկ է անում՝ ջրհորը աչքին թվում է անտակ:

А колодец был так глубок, так глубок, что и дна не было видно.

The well was deep, so deep that the bottom could not be seen».

Բառային կրկնությունը բնագրում, ռուսերեն ու անգլերեն տարբերակներում նույն կերպ է արտահայտված: Թումանյանը պահպանել է չափազանցությունը, սակայն ոչ բառային կրկնությամբ: Համեմատենք հետևյալ նախադասությունները:

«Da fing die Prinzessin an zu weinen und weinte immer lauter und konnte sich gar nicht trüsten.

Սկսում է աղի-աղի լաց լինել:

² Ի. Գալպերինի կարծիքով բառային կրկնություններին մեծ տեղ պետք է տրվի, քանի որ բառերը բառիմաստը կրկնելով՝ 1) հիշեցնում են իրենց իմաստի մասին, 2) տեքստի գաղափարական կորիզ հանդիսանալով՝ լինում են հանգուցային, 3) հիշատակում կամ խորհրդանշում են մեկ այլ երևույթ:

Стала тут королевна плакать, плакала-рыдала все громче да горестней и никак не могла утешиться.

She began to cry, and cried louder and louder, and could not be comforted».

Թումանյանը բառային կրկնությունը չի պահպանել: Այս չափազանցության իմաստը նա արտահայտել է ազգային մտածողությանը բնորոշ «աղի-աղի լաց լինել» արտահայտությամբ, այդ կերպ փորձելով «հայացնել հեքիաթը» և այն դարձնել հայ ընթերցողին հոգեհարազատ:

Հեքիաթների սկիզբին, ընթացքին վերաբերվող արտահայտությունները բնորոշում են ցանկացած ժողովրդի բանահյուսությունը: Նման արտահայտությունները ձևային առումով տարբեր կերպ են թարգմանված տարբեր լեզուներում, ինչը պայմանավորված է ժողովրդական լեզվին բնորոշ առանձնահատկություններով: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Vor einem großen Walde... .

Մի մեծ անտառի բերանում...:

В лесу на опушке

Hard by a great forest... ».

Բնագրում «անտառի դիմաց» արտահայտությունը թարգմանիչները տարբեր կերպ են թարգմանել: Օրինակ՝ Թումանյանը թարգմանել է «անտառի բերանում»՝ ասես փորձելով շեշտել և հիշելի դարձնել տան գտնվելու տեղը: Պոլևոյը այն թարգմանել է ռուսերենին բնորոշ ձևով՝ «опушка леса»:

«In alten Zeiten, als das Wünschen noch geholfen hat, lebte einmal ein König.

Ժամանակով մի թագավոր է լինում:

В старые годы, когда стоило лишь пожелать чего-нибудь и желание исполнялось, жил-был на свете король.

In olden times when wishing still helped one, there lived a king».

Բնագիրը, ռուսերեն և անգլերեն թարգմանությունները նույն ձևով են սկսվում: Սա եվրոպական հեքիաթներին բնորոշ արտահայտություն է, որը բառացիորեն հայերեն թարգմանված կլինի՝ «Հին ժամանակներում, երբ երազանքները իրականություն էին դառնում,...»: Թումանյանը նախընտրել է այս արտահայտությունը փոխարինել «Ժամանակով ...» արտահայտությամբ, որպեսզի հեքիաթի հայ ընթերցողին այն օտար չթվա: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Als sie ein Stück des Weges gefahren waren,

Շատ են գնում, թե քիչ,...:

Проехали они часть дороги,

And when they had driven a part of the way,...».

Այս արտահայտությունը, որի հայերեն համարժեք թարգմանությունն է՝ «Այն ժամանակ, երբ նրանք անցել էին ճանապարհի կեսը,...», Թումանյանը փոխարինել է «շատ են գնում, թե քիչ» արտահայտությամբ՝ փորձելով հեքիաթը հարստացնել հայկական հեքիաթներին բնորոշ բառապաշարով և ձգտելով այն համապատասխանեցնել հայկական ժողովրդական հեքիաթի օրինաչափություններին: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Am frühen Morgen,

Առավոտը ծեգում է, թե չէ, ...:

Ранешенько,

When day dawned... ».

«Ծեգ» բառը թեև այսօր այնքան էլ հաճախ չի գործածվում, սակայն շատ հատուկ է հայերենին: Սա հեքիաթը «հայացնող» տարրերից է: Թումանյանը կիրառում է նաև «ծեգել» բայը: Բնագրից որոշակիորեն տարբերվում է նաև Պոլևոյի թարգմանությունը: Նա գործածել է «ранешенко» բառը: Իմիջիայլոց, նա շատ հաճախ է գործածում այս քնքշացնող, նվազական մասնիկը: Համեմատեք հետևյալ նախադասությունները.

«Hänsel und Gretel saßen um das Feuer, und als der Mittag kam, aß jedes sein Stücklein Brot.

Հենգելն ու Գրետելը կրակի կողքին նստում են, ճաշելու ժամանակն էլ որ գալիս է, ամենքն իրենց հացի կտորն ուտում են:

Гензель и Гретель сидели у огня, и когда наступил час обеда, они съели свои кусочки хлеба.

Hansel and Gretel sat by the fire, and when noon came, each ate a little piece of bread.»:

Այս հատվածն ուշադրության է արժանացել նրա համար, որ հայ և ռուս թարգմանիչները «կեսօր» բառը թարգմանել են որպես «ճաշելու ժամ», այնուհետև «կեսօր»: Այստեղ մեծ դեր ունի ազգային մտածողությունը: Ջարմանալի չէ, որ հայերենում գոյություն ունի «օրը ճաշ դառնալ» արտահայտությունը:

Հատուկ ուշադրության են արժանի բնագրում առկա դարձվածքների, ասացվածքների թարգմանության համարժեքները:

Յուրաքանչյուր ժողովուրդ ունի դարձվածքների և ասացվածքների միայն իրեն հատուկ գանձարանը: Սրանց թարգմանությունները, բնականաբար, ազգայնացնում են հեքիաթների թարգմանությունները: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Er hatte wenig zu beißen und zu brechen.

Պակասության մեջ են լինում:

Было в семье и скудно и голодно.

He had little to bite and to break.»:

Բնագրի «zu beißen und zu brechen» արտահայտությունը իր համարժեքն ունի անգլերենում` «to bite and to break»: Ռուս թագմանիչը հեքիաթ է ներմուծել ռուսերենին բնորոշ, սակայն իմաստով բնագրին մոտ արտահայտություն: Թումանյանը գրել է «պակասության մեջ լինել»: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«”Du schreist ja, daß sich ein Stein erbarmen möchte.”

-Ինչի՞ համար ես էդպես աղի-աղի լաց լինում:

“You weep so that even a stone would show pity.”

“От твоего плача и в камне жалость явится”.»:

Բնագրում, անգլերեն ու ռուսերեն թարգմանություններում այս նախադասությունը դարձվածքի տեսքով է ներկայացված, որի բառացի հայերեն թարգմանությունն է. «Այնպես ես լաց լինում, որ անգամ քարը կխղճա»: Թումանյանը այստեղ էլ գործածել է «աղի-աղի լաց» լինել դարձվածքը: Համեմատեք հետևյալ նախադասությունները.

«Der Vater aber freute sich, denn es war ihm zu Herzen gegangen,....

Իսկ հերն ուրախանում է, որովհետև նրա սիրտը ցավում էր,....:

A отец очень им обрадовался: его и так уж совесть мучила,... .

The father, however, rejoiced, for it had cut him to the heart ,... .»:

Գերմաներեն, անգլերեն և հայերեն տարբերակներում ասվում է «հոր սիրտը ցավում է», իսկ Պոլևոյի մոտ ի հայտ է եկել նաև «խղճի» գործոնը: Համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Wir haben noch einen halben Laib Brot, hernach hat das Lied ein Ende.

Մենակ մի կես հաց է մնացել, էն էլ որ կերանք, մեր բանը պրծած է:

Мы опять все съели; в запасе у нас всего-навсего пол каравая хлеба, а там уж и песне конец!

We have one half loaf left, and that is the end. »:

Համեմատենք նաև հետևյալ նախադասությունները.

«Wer A sagt, muß B sagen.

Դե ով որ այբն ասել է, բենն էլ պետք է ասի:

Назвался груздем, так и полезай в кузов!

He who says ‘a’ must say ‘b’.»:

Ուշագրավ է հատկապես ռուսերեն տարբերակը: Այն կրում է ազգային դրոշմը, սակայն լիովին արտահայտում է բնագրի իմաստը:

Հեքիաթում առկա են նաև չափազանցություններ: Օրինակ.

«Der König hatte wunderschöne Töchter, die jüngste von ihnen war so schön, daß die Sonne selber, die doch so vieles schon gesehen hat, sich verwundene, sooft sie ihr ins Gesicht schien.

Էս թագավորը մի քանի աղջիկ է ունենում՝ մինը մյուսից գեղեցիկ, բայց ամենից գեղեցիկը լինում է փոքրը. էնքան սիրուն, էնքան շարմաղ, որ էլ չուտես, չխմես, կանգնես ու մտիկ անես:

King’s daughters were all beautiful, but the youngest was so beautiful that the sun itself, which has seen so much, was astonished whenever it shone in her face.

Все дочери короля были одна краше другой, а уж младшая королевна была так прекрасна, что даже само солнышко, так много выдавшее всяких чудес, и то дивилось, озаряя ее личико.»:

Ռուսերեն և անգլերեն թարգմանությունները, ինչպես միշտ, մոտ են բնագրին, իսկ Թումանյանը կրկին տարբերվում է: Բնագրում ասվում է. «Ամենափոքր աղջիկն այնքան գեղեցիկ էր, որ ամզամ աշխարհում այդքան շատ բան տեսած արևը հիանում էր նրանով»: Հայերեն տարբերակում ասվում է. «Էնքան սիրուն, էնքան շարմաղ, որ չուտես, չխմես կանգնես ու մտիկ անես»: Կրկին համեմատենք հետևյալ նախադասությունները.

«Heirich war voll Freude über die Erlösung seines Herrn.

Տեսնելով իր երիտասարդ տիրոջը կախարդանքից ազատված ու բախտավոր, ուրախությունից սիրտը օխտը գազ բաց էր եղել:

Henry was full of joy because of this deliverance.

Генрих был рад-радешенок избавлению своего господина от чар.»:

Այս նախադասությունը բնագրում և անգլերենում նույն է: Երկու օրինակներում էլ ասվում է «լի ուրախությամբ»: Ռուս թարգմանիչը այն փոխարինել է «рад-радешенок» արտահայտությամբ, իսկ Թումանյանը, ինչպես միշտ, յուրօրինա-

կություն է հանդես բերել: Նա գրել է. «Օհանի սիրտը ուրախությունից օխտը գազ բաց է լինում»:

Անդրադառնա՞նք հեքիաթի իմաստային բովանդակությանը:

Հեքիաթը հեքիաթ չէր լինի, եթե դրանում չլինե՞ր չար և բարի ուժերի հակամարտություն, իսկ վերջում՝ բարու հաղթանակ, որն էլ ապահովում է հեքիաթի իմաստային բովանդակությունը:

«Հենգելն ու Գրետելը» հեքիաթը մի պատմություն է փոքր քույր և եղբոր մասին, որոնք ընկնում են կախարդ մարդակերի ճանկը: Սակայն հնարամտությունը հանդիսանում է նրանց փրկության բանալին:

Չար ուժը հեքիաթում մարմնավորված է կախարդի և խորթ մոր կերպարներում: Բարի ուժը նույնացվում է երեխաների և հոր հետ: Ըստ բանահավաք Մարկ Լյուտիի՝ կախարդն ու խորթ մայրը նույն կերպարն են, քանի որ կախարդի հետ մեռնում է նաև խորթ մայրը: Թերևս նրանք մեկ կերպար են, քանի որ երկուսն էլ ցանկանում են երեխաներին վնասել: Կախարդի և խորթ մոր մահը հեքիաթում խորհրդանշում է չար ուժի պարտությունը:³

«Գորտը» հեքիաթում չար ուժերն անձամբ հանդես չեն գալիս: Առկա է միայն նրանց չարագործության արդյունքը՝ գորտը: Չար ուժը հեքիաթում մարմնավորում է կախարդը, որի մասին պատմում է արքայազնը հեքիաթի վերջում: Սակայն կախարդը հանդես չի գալիս որպես գործող անձ:

Բարի ուժը մարմնավորված է արքայազնի կերպարում, որը արքայադստեր օգնությամբ հաղթում է չարին: Բարու հաղթանակին օգնում է նաև թագավորը, որն աղջկան ստիպում է կատարել գորտի կամքը:

Հեքիաթում առկա է նաև մի շատ հետաքրքիր կերպար՝ Երկաթե Օհանը: Օհան անունով Թումանյանը փոխարինել է Հենրիխ գերմանական անձնանունը՝ հեքիաթը «հայացնելու» նպատակով: Օհանը հայտնվում է հեքիաթի վերջում և առաջին հայացքից այնքան էլ կապ չունի հեքիաթի հետ: Օհանը երեք կապ երկաթ է դրել իր սրտին, որ սիրտը ցավից չպայթի, քանի որ իր տերը, ինչպես Թումանյանն է ասում, «ապրում էր հորում»՝ գորտի օրում»: Հիմա, երբ տերն ազատ է, նրա սրտի երկաթե կապանքները պոկվում են և աղմուկ հանելով՝ ընկնում:

Ո՞վ է Օհանը և ինչո՞ւ է հեքիաթում ընդհանրապես հայտնվել: Օհանը հասարակությունն է: Արքայազնը, որը գորտի կերպարանք է ստացել, արդարությունն է, ճշտմարտությունը, որին չար ուժերը փորձում են ոչնչացնել՝ արքայազնին գորտ դարձնելով: Սակայն գորտը նորից արքայազն է դառնում, և արդարությունը վերականգնվում է ու հասարակության սիրտն ու հոգին՝ մարմնավորված Օհանի կերպարում, թեթևանում է երկաթե ծանր հոգսից:

Հեքիաթն ունի նաև բարոյախրատական նշանակություն, որն արտահայտված է հետևյալ նախադասությամբ.

«Չպետք է արհամարհես նրան, ով որ փորձանքի ժամանակ թանկ էր քեզ համար: Ինչ որ խոստացել ես, պետք է կատարես»:

Թագավորն իր աղջկան ստիպում է կատարել գորտի բոլոր ցանկությունները, քանի որ նա անձամբ է գորտին դա խուստացել: Խոստումը հեքիաթում ստանում

³ Մարիա Տատերը դեմ լինելով կախարդի և խորթ մոր՝ նույն կերպարը լինելու տեսակետին, կարծում է, որ նրանք չեն կարող նույնը լինել, քանի որ մայրն ազատվում է երեխաներից՝ նրանց քաղցից փրկելու համար, իսկ կախարդը ուզում է ուտել նրանց:

է գերագույն արժեք, որի պահպանումը տանում է դեպի բարու հաղթանակը:

Յուրաքանչյուր ստեղծագործություն ունի ոչ միայն ձևային կազմակերպվածություն, այլև բնորոշվում է բովանդակային տարածությամբ, որը լցվում է իմաստներով, այլ խոսքով, ինչպես Կազարին⁴ է գրում, տեքստում առկա է իմաստային մեծ դաշտ, տեքստի բովանդակությունն ի գործ է սերելու տարբեր իմաստներ:

Հեքիաթի իմաստասերումը ժողովրդի մեջ գոյություն ունեցող նույն բանահյուսական զրույցի տարբերակների և մշակողների կողմից ներմուծած ուրույն իմաստների ու հատկանիշների ամբողջությունն է, որը իմաստին տարածայնություն է հաղորդում և հնարավորություն է տալիս տվյալ իմաստային դաշտի սահմաններում ազատորեն ընտրություն կատարել:

Հ. Թումանյանի համար թարգմանությունը, իրոք որ, արվեստ է, քանի որ նա դրա մեջ դրել է ոչ թե իրենից մի մասնիկ, այլ իր և իր ժողովրդի հոգին ու սիրտը, այսպիսով «հայացնելով» հեքիաթները:

Որպես ընդհանրացում՝ կատարված թարգմանությունների վերաբերյալ կարելի է եզրակացնել, որ յուրաքանչյուր թարգմանիչ նպատակ է ունեցել հեքիաթը մոտեցնել իր ժողովրդի մտածելակերպին:

Պոլևոյի հեքիաթը ազգային շատ տարրեր է ներառում՝ ստեղծելով տպավորություն, որ այն հենց ռուսերենով է ստեղծվել: Նա Գրիմների հեքիաթները թարգմանելու մեծ փորձ ունի: Նրա թարգմանություններում աչքի են ընկնում նվազական, քնքշացնող ածանցներ ունեցող բառերը, որոնք բնագրում նման երանգավորում չունեն: Օր՝. «женушка», «муженек», «детки», «постелька», «сестричка», «мальчишка», «девченка», «избушка», «кошечка», «голосок», «огонек», «мячик», «тарелочка» և այլն:

Պոլևոյը այսպես է վարվել, որպեսզի հեքիաթը ռուս կրտսեր ընթերցողների համար հոգեհարազատ դարձնի: Նա հաճախ է օգտագործում ռուս ժողովրդական խոսակցական լեզվին բնորոշ արտահայտություններ, ինչպիսիք են՝ «отворить дверь», «бабушка», «озабочуть», «запалить костер» և այլն:

Մ. Հունթի կատարած թարգմանությունները շատ քիչ ազգային տարրեր են պարունակում: Նա գրական լեզվով է թարգմանել: Պոլևոյի և Թումանյանի թարգմանություններն ընթերցելիս՝ զգացումներ են առաջանում, որոնք ամեն անգամ թարմանում են, երբ դրանք վերհիշում ենք: Իսկ Հունթի թարգմանությունը հուզական առումով չեզոք է:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի հատկապես հայերեն թարգմանությունները, որտեղ Թումանյանը առավել քանակով ազգային տարրեր է ներմուծել:

Հովհաննես Թումանյանի կատարած թարգմանությունները ընթերցելիս՝ թվում է, թե դրանք ստեղծված են առանց ստեղծագործական տառապանքի, մի շնչով, մինչդեռ նա տքնել է ամեն մի բառի ու արտահայտության վրա:⁵ Դրանք կենդանի են, լի կյանքով, համապատասխանում են հայկական ժողովրդական

⁴ *Казарин Юрий Викторович, Основы текстотворчества, 2009:*

⁵ Թեև Թումանյանը թարգմանությունը համարում էր ապակու տակ դրված վարդ, որի իսկական բույրը չի զգացվում, բայց նրա թարգմանած հեքիաթները կարող են մրցել իրենց բնագրերի հետ:

հեքիաթի օրինաչափություններին և ներծծված են ժողովրդական լեզվի արտահայտչամիջոցներով: Ո՛չ Պոլևոյը, ո՛չ էլ Հունթը այդ աստիճան չեն ազգայնացրել հեքիաթները: Թումանյանի թարգմանություններում հեքիաթները հարմարեցված են միջավայրին, հերոսները հաճախ կրում են հայկական անուններ (օր.՝ Օհան՝ Հենրիխի փոխարեն): Նրա թարգմանություններում «թռչունները վեր են քաղում հացի փշրանքները», «աղի-աղի լաց են լինում», «սիրտը օխտը զազ բաց է լինում», «գորտը ջրհորում ճպելավում ու կռկռացնում է», «կախարդն էլ Գրետելին հրում ու ճրճըճում է»: Այս ամենը թարգմանված հեքիաթները դարձնում են հայ երեխայի համար հեշտ ընկալելի:

Այսպիսով, թարգմանչի մեծությունը չի կայանում բառի՝ բառարանում ամրագրված իմաստով թարգմանելու մեջ: Նա պետք է կարողանա բառը թարգմանել այնպես, որ և՛ լիովին փոխանցի այդ բառի կամ էլ նախադասության մեջ հեղինակի կողմից դրված երանգները, և՛ թարգմանությունը ընկալելի ու հարազատ դարձնի այն ժողովրդին, որի համար թարգմանվել է:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Վարդանյան Ա. Մ.**, Հովհաննես Թումանյանի հեքիաթները, Երևան, 1986:
2. **Թումանյան Հ.**, «Հենզելն ու Գրետելը», «Գորտը» (Գրիմ եղբայրներ):
3. **Казарян Юрий Викторович**, Основы текстотворчества, 2009:
4. **Полевой Петр Николаевич**, "Гензель и Гретель" , "Король-Лягушонок" (братья Гримм):
5. **Margaret Hunt** "Henzel and Gretel", "The Frog King"(brothers Grimm).
6. www.surlalunefairytales.com
7. www.lib.ru. Библиотека Мошкова.
8. www.armeniahouse.org
9. www.en.wikipedia.org

НАЛИЧИЕ НАЦИОНАЛЬНЫХ ЭЛЕМЕНТОВ И ФАКТОР ЯЗЫКОВОЙ КУЛЬТУРЫ В ПЕРЕВОДЕ

С. К. Симонян

В данной статье представлены сказки братьев Гримм "Гензель и Гретель" и "Лягушка" и их переводы на армянский (Ов. Туманян), русский (П. Полевой), английский (М. Гунт) языки в сравнительной типологии. В этой статье автор попыталась осветить языковые и культурные особенности в основном в аспекте описания национальных образов.

В статье рассмотрена структурная сторона сказок. Сравнению были подлежат различные повторы, преувеличения, фразеологизмы, поговорки. Были рассмотрены смысловое содержание сказок и возможности расширения семантического поля текстов. Дана общая оценка выполненной работе переводчиков.

THE LINGUISTIC-CULTURAL FACTOR AND NATIONAL PECULARITIES IN TRANSLATION

S. K. Simonyan

The fairy tales by brothers Grimm "Henzel and Gretel" and "The Frog King" and their Armenian (by H. Tumanyan), Russian (by P. Polevoy), English (by M. Hunt) translations are represented in this article in comparison. In this article an attempt has been made to illustrate some linguistic, cultural peculiarities especially from the point of view of the national overview of the characters. The paternalstructural side of the tales has been observed. Different repetitions, exaggerations, phraseological units and sayings have been compared. The semantic fable of the tales and the opportunities given by the texts to broaden the semantic field. General pricing of the translators' work is given.

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО ФОЛЬКЛОРА

Э. А. ДЖАЧВАДЗЕ-ХМАЛАДЗЕ

Доктор исторических наук

ЭТЕР ДЖАЧВАДЗЕ

Телавский государственный университет им. Я. Гогешавили

Корни армянского творчества теряются в глубине веков. Мифы о Хайке и Араме (их имена носит армянский народ), Ваанге и эпосе об "Випасанке" и сегодня считаются бесценным образцом армянского фольклора. Армянский народ, как и все цивилизованные народы, не прекращал творческую деятельность. Его фольклор украшают образцы сравнительно поздней эпохи, сыгравшие большую роль в формировании духовной культуры.

Жемчужины народного творчества усовершенствовались, собирались и передавались будущим поколениям на протяжении веков, как несравненные образцы устного творчества. По жанрам они были многоцветными и рассуждение о них в пределах одной статьи было бы несерьезным. На этот раз мы остановимся на одном скромном цикле этого большого творчества - на забавных и поучительных историях Карабахского балагура Пыл-Пуги (иногда его упоминают и как Пулу-Пуги).

Образцы этого цикла в Тбилиси были в первые изданы М. В. Бархударянцем [1], в дальнейшем он же повторно напечатал их в Вагаршапете [2], а полный текст им был собран и издан известным фольклористом С. Исраеляном в 1959 году [3]. Все указанные издания были на армянском языке, и мы не смогли их использовать. При работе над данным трудом мы пользовались составленным и изданным Г. О. Карапетяном на русском языке трудом [4.25.- 72].

На русском языке есть множество трудов, изданных М. Абегианом, С. Якуном, В. С. Налбандяном, И.А. Орелом, М. В. Бархударянцем, М. Шагиняном, И. Хачатрянном, Т. Галаяном об армянской литературе, а именно о фольклоре. Их исследования и исследования других авторов оказали нам большую помощь, в том, чтобы мы смогли как